



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի՜Հրապարակ 1

☎/0322/ 4-61-92

Fax /0322/2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2020թ.

Նարե Ղափանցյանին
ք.Երևան, Հայաթյան 51, բնակարան 35
nare191@gmail.com

Ձեր 13.07.2020թ. թիվ LRAA-C9DA-9BA5-62D4 դիմումին

Դիմումի ուսումնասիրությունից պարզվեց, որ 40°57'21.9"N 34°19'21.9"E կոորդինատներով հողամասը Գյուլագարակ համայնքի սեփականությունն է, գտնվում է Կուրթան համայնքում և հանդիսանում է 06-057-0100-0001 ծածկագրով 0.64253 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության 2-րդ կարգի խոտհարք, որի կադաստրային արժեքը 1 քմ հողամասի համար կազմում է 120.75 ՀՀ դրամ: Հաշվի առնելով, որ պահանջվող հողամասը հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության հողամաս, այն ՀՀ օրենսդրությամբ արգելվում է օգտագործել այլ նպատակների համար: Ձեր կողմից հողամասը ձեռք բերելու դեպքում անհրաժեշտություն է առաջանալու ՀՀ կառավարության 29.12.2011 թվականի թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով փոփոխել հողամասի նպատակային նշանակությունը, որից հետո հնարավոր կլինի իրականացնելու նախատեսվող գործունեությունը: Հայտնում եմ նաև, որ Կուրթան համայնքում կառուցապատման ենթակա հողամասերի 1քմ-ի կադաստրային արժեքը կազմում է 222 ՀՀ դրամ, իսկ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու դեպքում պետք է վճարվի կադաստրային արժեքների տարբերություն, որը տվյալ հողամասի 1 քմ-ի համար կազմում է 101,25 ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Գյուլագարակ համայնքի ավագանին տվել է իր համաձայնությունը 06-057-0100-0001 ծածկագրով 0.64253 հա հողամասը վարձակալությամբ տրամադրելուն, որից հետո պետք է հայտարարվի հողամասի վարձակալության իրավունքի միջոյթ: Ցանկության դեպքում կարող եք հետևել Հայաստանի Հանրապետությունում գործող պաշտոնական ծանուցումների azdarar.am էլեկտրոնային հասցեով Հայաստանի Հանրապետություն օրաթերթում հրապարակվող հայտարարություններին և մասնակցել մրցույթին:

Հարգանքով՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ